ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15 հուլիսի 2022 թվական թիվ 133-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 61-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան, Այգաբաց, Բասեն գյուղերի վարչական ղեկավարների և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունները՝ մարզիկներին և մարզիչին դրամական աջակցություն տրամադրելու մասին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2022 թվականի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրի 4727 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝

1) 2022 թվականին Ուկրաինայի Խարկով քաղաքում ազատ ոճի ըմբշամարտի մեծահասակների միջազգային մրցաշարում 57 կիլոգրամ քաշային կարգում 1-ին տեղը զբաղեցրած և 2022 թվականի Եվրոպայի առաջնության 3-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Մանվել Արծվիկի Խնձրցյանին՝ 1000000 (մեկ միլիոն) դրամ,

2) 2022 թվականին Սերբիայում կայացած բռնցքամարտի մեծահասակների միջազգային մրցաշարում 92+ կիլոգրամ քաշային կարգում 1-ին տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Այգաբաց գյուղի բնակիչ Դավիթ Արիստակեսի Չալոյանին՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ,

3) 2022 թվականին Սերբիայում կայացած բռնցքամարտի մեծահասակների միջազգային մրցաշարում 80 կիլոգրամ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բասեն գյուղի բնակիչ Համբարձում Արթուրի Հակոբյանին՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ,

4) 2022 թվականին Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի մեծահասակների առաջնության 86 կիլոգրամ քաշային կարգում 1-ին տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Հենրիկ Հովհաննեսի Ճղրիկյանին՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ,

5)2022 թվականին Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ոճի ըմբշամարտի պատանիների առաջնության 60 կիլոգրամ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հացիկ գյուղի բնակիչ Յուրիկ Վռամի Նահապետյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ, մարզիչ՝ Խոսրով Մելիքյանին՝ 20000 (քսան հազար) դրամ:

6)2022 թվականին Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ոճի ըմբշամարտի պատանիների առաջնության 48 կիլոգրամ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հացիկ գյուղի բնակիչ Միհրան Միրզայի Սլոյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ:

7) 2022 թվականին Իրանի Իսլամական Հանրապետության Տոնեկաբոն քաղաքում կայացած ազատ ոճի ըմբշամարտի մեծահասակների միջազգային մրցաշարում 74 կիլոգրամ քաշային կարգում երրորդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի բնակիչ Խաչատուր Բաղդասարի Պապիկյանին՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ:

8) 2022 թվականին Իտալիայի մայրաքաղաք Հռոմում կայացած ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում 79 կիլոգրամ քաշային կարգում առաջին տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Մուշեղ Միշայի Մկրտչյանին՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

9) 2022 թվականին Ֆրանսիայի Հանրապետությունում կայացած բռնցքամարտի երիտասարդների համաշխարհային ուսանողական առաջնությունում երկրորդ տեղը զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Յուրա Վահրամի Բաբլումյանին՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ;

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -22 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Կ. ԱՐՇԱԿՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Հ. ՆԱՎՈՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

15 հուլիսի 2022 թվական
գյուղ Ախուրյան